

Գ. Ստեփանյան

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

Արմենակ Հայկունու (Արմենակ Ծիգմենճյան) անունը անխզելիորեն կապված է 60-ական թվականների սկզբների արևմտահայ առաջադիմական այն գրողների ու հրապարակախոսների անվան հետ, որոնք՝ համախմբվելով «Մեղվի» շուրջ, սկզբունքային պայքար են ծավալել ռեակցիոն գաղափարախոսության դեմ, կատարել են կրթական լուսավորական խոշոր աշխատանք և իրենց տեղն ունեն հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ,

Հայկունին միաժամանակ առաջին հայ դրամատուրգներից մեկն է, մի քանի աշխարհաբար ինքնուրույն պիեսների հեղինակ։ Նա հրատարակել է թատերական առաջին հայ պարբերականը, թողել է ռոմանտիկական ուղղության մի գրված մի ծավալուն վեպ և խորապես գաղափարական հրապարակախոսական փայլուն էջեր, որոնք ուշագրավ են իրենց արժարժած հասարակական-քաղաքական հարցերով։

Ըր հասարակական գրական գործունեության առաջին շրջանում (1857—60 թթ.) Հայկունին ապրել է գաղափարական որոնումների շրջան, գտնվել է արևմտաեվրոպական ռոմանտիկ դրականության ազդեցության տակ և իր համոզմունքների մեջ լիբերալ-լուսավորական պահանջներից այն կողմ չի անցել։ Այս շրջանում է գրել նա իր բոլոր դրամատիկական ստեղծագործությունները, բանաստեղծությունները և «Էլիզա» վեպը (1861)։ Սակայն մոտենալով ժամանակի առաջավոր դեմոկրատական հոսանքին, հատկապես «Մեղվի» շուրջ համախմբված մարդկանց, նա աստիճանաբար կանգնում է դեմոկրատական դիրքում, և հավատարիմ մնում իր նոր սկզբունքներին։

Արմենակ Հայկունին ծնվել է Պոլսում 1835 թ.։ Փոքր հասակից կորցրել է մորը և հանձնվել Ազգային հիվանդանոցի որբանոցը որպես գիշերօթիկ սան։ Հայկունու անհանգիստ բնավորությունը, ըմբոստ միջոցը բավարարություն չեն գտնում կիսաբանտային որբանոցում, որի դաստիարակության հիմքում ընկած էր ամենադաժան դեսպոտիզմն ու բթացնող սխոլաստիկան։ Նա մի գիշեր ոտաբոբիկ փախչում է որբանոցից, ընկնում Պոլսի Պեպեք թաղամասում՝ անդիպի Համլենի կողմից բացված գիշերօթիկ վարժարանը։

Այստեղ, Հայկունին, իր լուսավորական դավանանքից հրաժարվելու, բողոքականությունը ընդունելու պայմանով ձեռք է բերում որոշ կրթություն, հատկապես անդլերեն լեզվի բավարար իմացություն։ Օտար ու խորթ այդ դպրոցը, բարեբախտաբար ոչ միայն չի կարողանում հոգեպես կապել նրան բողոքականության հետ, այլ ավելի է նրա մեջ առաջացնում ատելություն դեպի քաղաքական որոշակի նպատակներ հետապնդող, հայ ժողովրդի ջլատմանը ձգտող այդ դպրոցը։

Հազիվ Համլենի դպրոցն ավարտած՝ սկսվում է Ղրիմի պատերազմը։ 19-ամյա պատանին 1854 թվականի սկզբից դառնում է Սևրտար էքրեմ էոմար փաշայի հրամանատարության գործող անգլիական հրամանատար Կոլոնել

Հայնի թարգմանը և մասնակցում պատերազմին: Զինվորական կյանքը, պատերազմական ծանր փորձությունները փշրում են խանդավառ պատանու ոռոմանտիկ երազները, քանդում նրա բոլոր ծրագրերը, բայց միաժամանակ նրան տալիս են կյանքի ճանաչողության հարուստ փորձ: Պատերազմական տարիների այս տպավորություններն են որ հետագայում իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել նրա «էլիզա» վեպում:

Պատերազմի վերջանալուց հետո Հայկունին վերադառնում է Պոլիս:

Պոլսահայ բուրժուազիան այդ թվականներին գտնվում էր Թանզիմաթին հաջորդող տասնամյակի առաջացրած իլյուզիաների ազդեցության տակ: Նախապատրաստվում էր, այսպես կոչված, Ազգային սահմանադրությունը: Ամենուրեք կազմվում էին կրթական և լուսավորական ընկերություններ, հրատարակվում էին պարբերականներ: Արևմտահայ թատրոնը սկսում էր իր առաջին քայլերը:

Հայկունին այս մթնոլորտում սկսում է իր գրական ու հասարակական գործունեությունը, խանդավառվելով ամենից շատ թատրոնի գաղափարով: Ցանկանալով նպաստել թատերական շարժման ծավալմանը, նա 1857 թվականի սկզբներից, առաջինը հայ իրականության մեջ, սկսում է հրատարակել «Մուսայթ Մասյաց» թատերական պարբերականը, հետապնդելով երկու նպատակ՝ մի կողմից պարբերականի էջերում զարկ տալ դրամատիկական ստեղծագործություններին, հայ բեմին մատակարարել ինքնուրույն պիեսներ, մյուս կողմից տեսական, բանասիրական հոդվածներով հիմնավորել թատրոնի դաստիարակիչ նշանակությունը հասարակական կյանքում, մերկացնել թատրոնի թըշնամիների կեղծ բարոյականությունը, նրանց խավարամոլությունը:

Հայկունու «Մուսայթ Մասյաց»-ը կարճ կյանք է ունեցել, որոշ ընդհատումներով, ծավալի փոքրացումով լույս է տեսել ընդամենը երկու տարի:

«Մուսայթ Մասյաց»-ի հենց առաջին համարում լույս է տեսնում «Հերսելի» թարգմանական պիեսը, որին հաջորդում է դարձյալ Հայկունու կողմից թարգմանված «Կատարինեն»:

Իր առաջին քայլերը կատարող հայ թատրոնը, սակայն, կարիք ուներ ինքնուրույն դրամատուրգիայի: Այդ պահանջը բավարարելու էր կոչված Սրապիոն Հեքիմյանի «Տաղք, քերթվածք, և թատերգություն» սովոր ժողովածուն, որը լույս տեսավ 1857 թվականին և պարունակում էր հեղինակի մի շարք ողբերգություններն ու չափածո գործերը: Հեքիմյանի պիեսները, սակայն, իրենց լիրթին գրաբար լեզվով չէին կարող պոլսահայ հանդիսատեսի պահանջը բավարարել: Մկրտիչ Պեշիկթաշլյանը և Արմենակ Հայկունին, հետագայում նաև ուրիշները, գրում են աշխարհաբար ողբերգություններ, գերազանցապես պատմական թեմատիկայով:

Հայկունին 1858 թվականին իր պարբերականի էջերում լույս է ընծայում «Իրնջակ» պատմական ողբերգությունը, աշխարհաբարով:

Թարգմանական և ինքնուրույն պիեսների հրատարակման դուգընթաց, նա «Մուսայթ Մասյաց»-ում տպագրում է մի ընդարձակ հոդված՝ նվիրված թատրոնի դերին ու նշանակությանը:

Պոլսի պահպանողական միջավայրը հնարավորություն չի տալիս նրան՝ շարունակելու սկսված գործը: Նրա պարբերականի բաժանորդների թիվը գնալով նվազում է, իսկ հակառակորդների թիվը՝ օրեցօր ավելանում: Ո՛չ ընթերցողների անունները հանդեսի էջերում հրատարակելու խոստումը, և ո՛չ էլ

նյութական ծանր վիճակը հասարակությանը հայտնող ճիշերը չեն կարողանում փրկել «Մուսայթ Մասյաց»-ի խմբագրին: Նա 1858 թվականի կեսերին հարկադրված է լինում դադարեցնել շաբաթաթերթը և պարբերաբար ամեն ամիս հրատարակել փոքր ծավալով տետրակներ, դարձյալ «Մուսայթ Մասյաց» ընդհանուր վերնագրով, որոնցից յուրաքանչյուրը պարունակում էր մեկ պիես:

Այդ տետրակներից հենց առաջինում լույս է տեսնում Հայկունու «Արա Գեղեցիկ և Շամիրամ» երգախառն պիեսը չորս արարվածով, որը խորենացու հաղորդած հայտնի առասպելի առաջին գրական մշակումն է և իր ժամանակին մի քանի անգամ բեմադրվել է հայ թատրոնում:

«Մուսայթ Մասյաց»-ի երկրորդ տետրակում Հայկունին հրատարակում է մի այլ ինքնուրույն, սակայն օտար կյանքից վերցրած ողբերգություն՝ «Վատ սիրտ կամ սոսկալի գիշեր մը Սիրաքուզայի մեջ» վերնագրով, որը միանգամայն աննկատ է մնում հասարակության կողմից:

Նույն պարբերականի չորրորդ տետրակում, որը լույս է տեսնում 1858 թվականի վերջերին, Հայկունին լույս է ընծայում «Ողիմպիադա» պատմական ողբերգությունը, որը իր գրական արժանիքներով անհամեմատ բարձր էր նախորդ պիեսներից և նույնպես հանդիսանում է Արշակ Բ-ի և Փառանձեմի ընտանեկան կոնֆլիկտի վրա հիմնված հայտնի պատմական դեպքի առաջին դրական մշակումը աշխարհաբար լեզվով:

«Մուսայթ Մասյաց»-ի այս երկրորդ շրջանում լույս տեսած հինգ տետրակներից երկուսն էլ (3-րդ և 5-րդ) հատկացված են Հայկունու արձակ և չափածո ստեղծագործություններին ու պոեմներին:

Չնայած նյութական ծանր պայմաններին, Հայկունին նույն այդ թվականներին մեծ դժվարությամբ հիմնում է մի թատերական ընկերություն, կազմակերպում մի քանի ներկայացում և ինքն էլ կատարում որոշ դերեր, սակայն նրա հիմնադրած ընկերությունը երկար կյանք չի ունենում, այդ պատասխանատու գործը դուրս բերելու պատիվը պատկանում է Սրապիոն Հեքիմյանին:

«Մուսայթ Մասյաց»-ի վերջնական դադարումից հետո Հայկունին պարբերաբար հրատարակում է առանձին բրոշյուրներ, լուսավորական, կրթական հարցերի մասին: Նա դուրս է գալիս ընդդեմ բողոքական պրոպագանդայի և նրա դեմ ուժեղ պայքար մղում, գրում է բազմաթիվ մերկացնող հոդվածներ և երկու բրոշյուր («Պղատոն ի Վոսփոր», «Թուրքանդա տիկին և յուր գաղափարը ամերիկացի երիցական քարոզչաց վրայոք»):

Հայկունին այս շրջանում գերազանցապես զբաղվում է ուսուցչությամբ՝ Սկյուտարի ճեմարանում և Ասլանբեկի դպրոցում: Սակայն այդ երկու զբաղումներն էլ չեն կարողանում ապահովել նրա համար ապրուստի ամենատարական միջոցներ: Նա հարկադրված է լինում թողնել Պոլիսը, անցնել Իզմիր: Այնտեղ նախ աշխատում է որպես Մեսրոպյան վարժարանի ուսուցիչ, ապա նվիրվում դրական, հրապարակախոսական աշխատանքի:

1861 թվականից Ա. Հայկունին և Գ. Չիլինկիրյանը Իզմիրի առաջավոր հասարակական գործիչներից և զրոգներից Մ. Մամուրյանի լայն աջակցությամբ հրատարակում են «Ծաղիկ» պարբերականը, որն իր դեմոկրատական ուղղությամբ չՄեղվից» հետո թյուրքահայ ամենաուշագրավ հրատարակությունն է և ղեկ այդ թվականներին:

«Ծաղիկ»-ի շուրջ համախմբված երիտասարդները հիմնականում ընդգրկված էին նաև Իզմիրի «Հաշտենց» ընկերության մեջ, որն գգալի աշխատանք է կատարել Իզմիրում հայ թատրոնի ստեղծման գործում: «Հաշտենց» ընկերության անդամներն էին, որ 1861 թվականին Իզմիրի նավամատուցում դիմավորեցին Միքայել Նալբանդյանին: «Ծաղիկ» պարբերականում լույս տեսած Հայկունու մի քանի գրական երկերը գերազանցապես յիշկական բանաստեղծություններ են:

Նույն 1861 թվականին Իզմիրում լույս է տեսնում Հայկունու «էլիզա» վեպը:

«Ծաղիկ»-ի արտահայտած գաղափարները, «էլիզա»-ի մեջ առաջ քաշված հարցերը ընդարձակում են Հայկունու հակառակորդների շրջանակները:

«Ծաղիկ»-ում տպված հակակրոնական մի հոդված պատճառ է դառնում, որ թերթը ժամանակավորապես փակվի, իսկ Հայկունին հեռացվի ուսուցչությունից:

Հայկունին հարկադրված նորից գալիս է Պոլիս, փորձում վերահաստատակել «Մուսայթ Մասյաց» պարբերականը «Ջայն ընկերական» ենթավիճակի դրի հավելումով: Այս նոր պարբերականը ունեցել է շատ կարճ կյանք, սակայն եղել է ժամանակի ամենախիզախ, մարտնչող օրգաններից մեկը:

Հայկունին նույն այդ թվականներին (1863 թվականից) աշխատակցում է Գր. Ալեքսանյանի խմբագրությամբ լույս տեսած «Պեգասյան թռչնիկ»-ին: Ալեքսանյանի այս պարբերականը, որը ընդհանուր առմամբ լիբերալ մի հրատարակություն էր, իսկ որոշ հարցերում մնում էր համերաշխ պահպանողական գաղափարներին, Հայկունու աշխատակցած մեկ տարվա ընթացքում դառնում է առաջադիմական մի պարբերական, մի պահ վախեցնելով չափավոր գաղափարների տեր Գրիգոր Ալեքսանյանին:

Հայկունին «Պեգասյան թռչնիկ»-ի էջերում լույս է բնծայում իր մի շարք հոդվածները: Մեծ աղմուկ ու իրարանցում է առաջացնում «Պեգասյան թռչնիկ»-ի 1863 թվականի № 16-ում Հայկունու տպած «Ամուսնական» հոդվածը ուղղված եկեղեցու, հոգևորականության, նաև փողի վրա հիմնված բուրժուական հասարակության դեմ:

Հայկունին այդ մի քանի տարիների ընթացքում հրատարակում է «Գաղտնիք կղերականության» գրքույկը, «Իտա-առողջապահական «Գերեզմանք երիտասարդաց», «Գաղտնիք բնության», «Գարնան ծաղիկներ» բրոշյուրները: 1863 թվականին լույս է բնծայում իր պոլիմիկական ամենաուժեղ գործը «Ճերմակ կամ պրն. Ս. Փափազյան և յուր ժամանակը» վերնադրով, որտեղ շարադրում է իր ըմբռնումները եկեղեցու, կրոնի, հոգևորականության, դաստիարակության և այլ հարցերի մասին:

1864 թվականից սկսվում է Հայկունու գործունեության մի նոր, ավելի ուշագրավ շրջանը: Նա ստանձնում է Սվաճյանի «Մեղվի» խմբագրի պարտականությունը, սակայն նրա անվան շուրջ ստեղծված վայնասունը, նյութական ծանր վիճակը, առողջության քայքայումը, հնարավորություն չեն տալիս նրան «Մեղվում» հանդես գալու այնպիսի կրքոտությամբ ու թափով, ինչպես հանդես էր եկել «Ջայն ընկերասիրական»-ում և «Պեգասյան թռչնիկ»-ում: Կարճ ժամանակից հարկադրված է լինում ընդմիջում հրաժարվել գրական դեղամոնիթից:

Այդ թվականից էլ սկսում է Հայկունու, առանց այն էլ անմխիթար, նյութական դրության վատթարացումը:

1865 թվականին Հայկունին մի վերջին փորձ է անում վերսկսելու «Ջայն

ընկերասիրական» պարբերականը, սակայն Սամաթիայում բռնկված մի հրդեհ, որը լափում է նրա և՛ տունը, և՛ ձեռագրերը, նույնիսկ հագուստեղենն ու տնային անհրաժեշտ իրերը, վերջնականապես ջլատում է նրան: Տնտեսական ամենասարսափելի այս պայմանները, հակառակորդների է՛լ ավելի սաստկացող հարձակումները, անկրոնության ու անաստվածության մեջ նրան զրպարտելու փորձերը ընկճում են Հայկունու կամքը: Աստիճանաբար նա կորցնում է իր աշխուժությունը, եռանդը, հակվում է դեպի խմիչքը, ցանկանում ակոհոլի մեջ մոռանալ իր վշտերը:

Այսպիսի ծանր պայմաններում է, որ 1866 թվականի հոկտեմբերի 29-ին ծայր աստիճան աղքատության մեջ մեռնում է Արմենակ Հայկունին, 31 տարեկան հասակում:

II

Ասացինք, որ Հայկունու գեղարվեստական բոլոր ստեղծագործությունները գրված են նրա ստեղծագործական կյանքի առաջին շրջանում, մինչև 1861 թվականը, ուստի դրանց մեջ չի երևում ո՛չ որպես ստեղծագործող հասունացած հեղինակը, և ո՛չ էլ 1861 թվականից հետո ձևավորված դեմոկրատ մտածողը, չնայած դրան, Հայկունու այս շրջանի ստեղծագործությունները կարևոր են 50—60-ական թվականների արևմտահայ աղքատիկ գրականության մեջ և արժանի են ուշադրության:

Նրա գրական ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում դրամատիկական երկերը:

Հայկունու դրամատիկական ստեղծագործությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) թարգմանական գործեր կամ փոխադրություններ, բ) ինքնուրույն՝ պատմական ողբերգություններ: Թարգմանական են «Հերսիլիա» և «Կատարինե» պիեսները. փոխադրություն կարելի է համարել «Վատ սիրտ կամ սոսկալի գիշեր մը Սիրաքուզայի մեջ» պիեսը: Հայտնի չէ, թե սրանցից որե՛կ մեկը բեմադրվել է հայ թատրոնում:

Համենայն դեպս այդ պիեսները գեղարվեստորեն թույլ, դրամատիկական արվեստի տեսակետից քննադատության չդիմացող գործեր են: Դրանց մեջ իշխում են ժամանակի ֆրանսիական ու իտալական մելոդրամաներին հատուկ սանտիմենտալիզմը, արհեստական ինտրիգները, բռնազբոսիկ հանգույցներն ու այդ հանգույցների անսպասելի լուծումները: Ծուր, դաշույն, թույն, սրանք են այդ պիեսների զսպանակը: Դրանց գաղափարական հիմքում ընկած է չարի ու բարու բուրժուական բարոյախոսությունը:

Հայկունու դրամատիկական ստեղծագործությունների երկրորդ խմբի մեջ են մտնում նրա երեք ինքնուրույն պիեսները, պատմական հայ անցյալից վերցված թեմաներով, դրանք են «Երնջակ», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Ողիմպիադա»: Ուշագրավ գործ է «Երնջակը»:

Հայտնի է, որ հայոց պատմության այն բոլոր դրվագները, որոնք այդ և հետագա տարիներին դարձել են ողբերգությունների նյութ, գերազանցապես վերցված են եղել հայ թագավորների, նախարարների կյանքից, հյուսված են խել կամ պալատական ինտրիգների վրա և կամ արտահայտել են հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ: Երկու դեպքում էլ բոլոր պատահարների առանցքը կազմել են տիրապետող դասակարգերը, թա-

գավորները, նախարարները, ազնվականները: Բուն աշխատավոր ժողովուրդը դուրս է մնացել ինչպես մեր պատմիչների ու պատմաբանների տեսագաշտից, այնպես էլ այդ նույն պատմաբանների հաղորդած էպիզոդները պիեսի վերածող դրամատուրգների տեսագաշտից:

Հայկունին իր այս ողբերգության նյութը վերցրել է աշխատավոր ժողովրդի կյանքից:

Պիեսի գաղափարական բովանդակության հիմքում ընկած է երկու հարց՝ հայրենիքի պաշտպանության գաղափարը և սոցիալական անհավասարության քննադատությունը: Հայկունին, որի թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական բոլոր պիեսները, նույնիսկ «Էլիզա» վեսլը վերջանում են գլխավոր հերոսների դաշունահարությամբ կամ թունավորումով, այստեղ տարբեր մոտեցում է հանդես բերել: Նրա հերոսը՝ գերագասում է մեռնել ռազմի դաշտում, հանուն հայրենիքի կռվելիս:

«Ահ սիրով կուզեի մեռնել և սիրուհվույս հետ մեկտեղ անցնիլ մահվան սև դետեն..., բայց իմ հայրենիքս ավելի քաղցր է ինձ... այո՛ պարտիմ ապրել, մինչև որ պատերազմի մեջ թշնամյաց սրովը մեռնիմ»:

Սիրո ստորագասումը հայրենիքի պաշտպանության գաղափարին, XIX դարի կեսերում արժարժվող ազգային ազատագրական գաղափարների արձագանքն էր, որ նկատելի էր այդ թվականների շատ գրողների մոտ:

Հայկունին իր այս առաջին գեղասրվեստական ստեղծագործության մեջ դեռևս զգույշ է, անհամարձակ իշխող դասակարգի քննադատության մեջ, չնայած պիեսում կա սոցիալական անհավասարության որոշ քննադատություն. օրինակ՝ Աստղիկը, դժգոհելով իրենց նյութական ծանր վիճակից, ասում է.

«Ինչ տարօրինակ կարգադրություն... հարուստ անձինք իրենց հարստությունը կավելացնեն շարունակ, գրեթե առանց աշխատելու, իսկ աղքատները հազիվ հազ կրնան ճարել իրենց օրական ապրուստը դառն և անտանելի աշխատությամբ»՝ կամ՝ «թե որ աշխատությունը ըլլար մարդու հարստություն պարգևողը, իմ հայրս հիմա ամենահարուստ մեկը ըլլալու էր»²:

Հայկունին չի կարողացել հիմնավորել Աստղիկի առաջ քաշած այդ խիստ կենսական հարցը, նշել ելքը: Նրա հերոսուհին այս բողոքից հետո մխիթարվում է քրիստոնեական բարոյախոսությամբ՝ այս կյանքի վաղանցուկ լինելու մասին:

Հայկունու «Արա Գեղեցիկ և Շամիրամ» դրամատիկական պոեմը շատ բանով տարբեր է հետագա տարիներին մշակված համանուն պիեսներից:

Հեղինակը պիեսը կառուցել է օտար բռնապետության դեմ պայքարի գաղափարի վրա, սակայն չի կարողացել տիպականացնել իր երկու գլխավոր հերոսներին՝ Արային ու Շամիրամին. Շամիրամը չի ներկայացված որպես գոռոզ ու ամբարտաձան բռնապետ, և ոչ էլ Արան՝ որպես տոկուն, խիզախ ու վեհերոտ, հայրենիքի պաշտպան: Թե՛ Շամիրամի և թե՛ Արայի համար բնորոշ այս հատկանիշների մասին խոսում է հեղինակը, մինչդեռ իրականում նրանք ներկայացված են այլ կերպ:

Հայկունու Շամիրամը սիրո ցանցի մեջ մոլորված մի կին է, որի միակ հոգսն է՝ ողջ առողջ ձեռք գցել Արային և դարձնել իր կրթերի գերին: Շա-

¹ «Մուսայր Մասյաց», 1868:

² Նույն տեղում:

մի րամը զուրկ է տիրապետողի, իշխողի գծերից: Նա մեղմ է, քնքուշ, նույնիսկ գուրգուրող, իսկ պիեսի վերջում բանն այնտեղ է հասնում, որ զղջում է իր կատարածի համար և ներողություն խնդրում Արայից:

Ազգային ումանտիզմը այս պիեսի առանցքն է: Արայի կողմնակիցները ամեն մի առիթով երկար ճառեր են ասում: Այդ բոլոր ճառերը ըստ ամենայնի միամիտ են, անբնական և ոչ մի տպավորություն չեն թողնում, ունեն սակայն մի ներքին առանցք, որը Արմենակ Հայկունու և նրա ժամանակակից հայ պրոգրեսիվ մտածողների համոզմունքն էր. այն՝ թե գերագույն երջանկությունը հայրենիքի համար կռվելով՝ նրա համար զոհվելն է, հայ նախնիների՝ Հայկի, Արամի, Արմենակի արժանավոր ժառանգորդները դառնալն է. այս գաղափարախոսությունը որոշակիորեն ձևակերպված է Արայի մահվան րոպեներին՝ որդուն ուղղված հետևյալ խոսքերի մեջ:

«Մի ողբար իմ մահս, որդյակ...
Անօգուտ է... մի ողբար, մի...
Այն արյունը, որ զիս կգորացնեն
Եվ հիմա հայրենյաց համար կթափվի
Նույն արյամբը լեցվե
Որդյակ իմ սիրելի,
Դուն ալ իմ պատվույս արժանի եղիր...
Վեր վերցուր զիս քիչ մը, որդյակ իմ...
Տեսնեմ գոնե անգամ մըն ալ
Այն երկիրը. որ զիս ծնավ...
Կարթոս, որդյակ իմ, խոստացիր ինձի
Քանի որ լսելու կարողություն ունիմ
Թե քու հայրենիքդ պաշտպանես պիտի
Երդում ըրե թե դու
Կյանքիդ ավելի զայն պիտի սիրես...
Երդում ըրե, թե դու
Անքիժ, անարատ զայն պիտի պահես...
Երդում ըրե, թե դու
Անվախ թշնամյաց հետ պիտի կռվիս,
Երդում ըրե, թե դու
Հայրենյացդ սիրուն զոհ պիտի ըլլաս:

Հայկունու քրիստոնեական դաստիարակությունը, առհասարակ այդ շերտ-ջանի նրա կրոնական ըմբռնումները, որոշ ազդեցություն են թողել «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ստեղծագործության վրա: Չնայած պիեսի նյութը հեթանոսական շրջանից է վերցված, սակայն այդտեղ նկատելի կերպով առկա է քրիստոնյա հեղինակը: Ինչպես Բագրատունին իր Հայկ Դյուցազնի մեջ, այնպես էլ Հայկունին «Արա Գեղեցիկ և Շամիրամ» պիեսում պաշտպանում է միաստվածության գաղափարը: Երկինքը՝ միաստվածության այդ սիմվոլը նրա հերոսների ուղեցույցն է, ապավենը, առկա են հրկնային լուսապայծառ էակները, այսինքն՝ հրեշտակները:

«Արա Գեղեցիկ» պիեսը ուշադրության արժանի է մի քանի նկատառումով: Այն արձագանքում էր ժամանակի պահանջներին, կոչված էր հայ երիտասարդությանը ոգևորելու հանուն ազատության՝ ընդդեմ սովթանական բռնապետության, մի գաղափարախոսություն, որը միանգամայն առաջադիմական էր այդ ժամանակաշրջանում:

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» պիեսի մյուս առավելությունը նրա աշխարհաբար լեզունն է: Կարելի է ասել այդ առաջին տպագրված աշխարհաբար պատմական ողբերգությունն է, որը բեմադրվել է հայ թատրոնում մի քանի անգամ:

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» պիեսից ընդամենը մի քանի ամիս հետո լույս տեսած «Ողիմպիադա» ողբերգության զաղափարական բովանդակությունը՝ լավ թագավորի հակադրությունն է վատին: Հայկունու պատկերացրած Արշակը գիտակցում է իր բացասական գծերը, իրեն մեղադրում է թե՛ անարժան թագավոր է, թե՛ իր հպարտության, փառասիրության և այլ վատ հատկությունների պատճառով տուժելու է Հայաստանը: Հայկունին գտնում է, որ «Թագավորի մը գլխավոր պարտականությունն է իրեն հանձնված ժողովրդյան երջանկության համար աշխատել ու չե թե իրեն»:

Պիեսում, ըստ էության, կոնֆլիկտը բացառապես դառնում է Արշակի փառասիրության շուրջ ստեղծված նեղ պալատական ինտրիգաների վրա: Այդ նույն կոնֆլիկտի վրա է կառուցել Հայկունին Արշակի և Ներսես կաթողիկոսի հակառակությունը, չի տեսել այն խոր տնտեսական պատճառները, որոնք առիթ են տվել կրոնական իշխանությունների և թագավորական տների որոշ հակամարտություններին:

Գաղափարական այս թերություններով հանդերձ, «Ողիմպիադան» գեղարվեստական տեսակետից մի քայլ առաջ էր Հայկունու ստեղծագործական կյանքում: Հակառակ նախորդ պիեսներին, այստեղ որոշ չափով տիպականացված են մի քանի հերոսներ, հատկապես Փառանձեմը և նրա հայրը՝ Անդովկը:

Հայկունու դրամատիկական ստեղծագործությունները որպես գեղարվեստական գործեր թույլ են, նախ, և որևէ դրական ազդեցություն չեն թողել հայ դրամատուրգիայի հետագա զարգացման վրա: Ուստի Հայկունու գերը հայ դրամատուրգիայի պատմության մեջ ունի միայն պատմական նշանակություն:

Հայկունին գրել է մեծ թվով չափածո երկեր՝ լիրիկական բանաստեղծություններ, պոեմներ և այլն: Դրանց մի մասը լույս է տեսել նրա հրատարակած կամ աշխատակցած թերթերում՝ «Մուսայք Մասյաց», «Ծաղիկ», «Պեգասյան թռչնիկ», «Ձայն ընկերական» և այլն: Մի մասն էլ սփռված է նրա պիեսներում և «Էլիզա» վեպում: Այդ չափածո գործերի մեջ երևում են ամենից առաջ կյանքից բաժանականություն չստացած, արհամարհված ու հալածված պատանու հոգեկան տվյալանքները, անպատասխան մնացած սիրուց ստացած հուսալքումն ու հիասթափությունը:

Իր հրապարակախոսության մեջ երբեմն խիզախ ծառացումներ ունեցող Հայկունին բանաստեղծությունների մեջ զարմանալիորեն մեղմ է, քնքուշ, սիրող, երբեմն թախծոտ ու վշտոտ, աղերսող, անրջող, բայց երբեք՝ մարտնչող:

Նրա բանաստեղծությունների մեջ ուշագրավ է «Ուր երկիրս իմ հայրենի» բանաստեղծությունը, որտեղ երևան է եկել մի կողմից Հայկունու ջերմ հայրենասիրությունը, հայրենիքի կիզող կարոտը, մյուս կողմից նրա վարակող լիրիզմը: Այդ ուտանավորը հուզական է, համակված վշտով ու թախծով և բնորոշ է հայրենիքից հեռու, օտար երկրներում դեգերող հայրենասերի համար:

Այդտեղ Հայկունին երևակայությամբ թռչում է հայրենի լեռներն ու դաշտերը, տեսնում է հովիտներն ու գետերը, բլրակներն ու բարձրագագաթ լեռ-

ները, ոգեկոչում է այդ վայրերում անցյալում ապրած իր նախնիներին, հիշում թե ինչպես իր սրտի հետ խոսող այդ վայրերը այժմ հեռու են իրենից:

Արմենակ Հայկունին գրել է մի քանի արձակ և չափածո պոեմ, որոնք բոլորն էլ թույլ գործեր են: Դրանք պարունակում են մաքուր ու անաղարտ սիրո մասին երկար դատողություններ և բոլորի մեջ էլ հերոսները վերջում կամ անձնասպան են լինում և կամ բախտը նրանց կործանում է: Այդպիսի պոեմներ են «Վարդ ու Շուշանը», «Սմրատ և Նարգիզը», «Հովսեփ և Աստղիկ» և այլն:

Հայկունու գեղարվեստական ամենածավալուն ստեղծագործությունն է «Էլիզա» վեպը, որը լույս է տեսել 1861 թվականին Իզմիրում և պատկերում է Ղրիմի պատերազմի տարիներին օսմանյան բանակում հեղինակի կրած տապալորություններն ու դատողությունները:

Հովհ. Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհի» վեպից ուղիղ տասը տարի հետո լույս տեսած «Էլիզա»-ն, ըստ էության, արևմտահայ երկրորդ վեպն է աշխարհաբար լեզվով և ժամանակակից կյանքից վերցրած թեմայով:

«Էլիզա»-ի բովանդակությունը հետևյալն է. հերոսը (Հայկունին) Ղրիմի պատերազմին մասնակցելու ժամանակ Վառնայում ծանոթանում ու սիրում է էլիզա անունով մի օտար աղջկա: Կռիվը սկսելիս բաժանվում է նրանից, աղջիկը երկար սպասում է, հյուծվում, հիվանդանում: Մինչև Հայկունու զորացրվելը և վերադառնալը աղջիկը գերվում է ավազակների կողմից: Հերոսը հասնում է այն պահին, երբ մահամերձ աղջիկն իր վերջին շունչն է փչում ու սեր աղերսելով սիրած տղայի բազուկների մեջ փակում է աչքերը:

Այս շատ պարզ սյուժեն հեղինակը բարդացրել է կողմնակի մի շարք դեպքերի, արկածների նկարագրություններով, որոնք խճճում են վեպը, ձգձգում:

«Էլիզա» վեպում միմյանց դեմ պայքարում են բարի և չար ուժերը. Հայկունին, էլիզան, Մաթեոն ազնիվ են, առաքինի, մարդասեր, գուրգուրող ու օգնող, աշխատասեր, իսկ նրանց դեմ պայքարի դուրս եկած Համիդը, հիսուսյան վարդապետ Վիլյամսը և ուրիշները չար են, դաժան: Բարու և չարի այս պայքարի վրա հիմնված է ողջ վեպը, որտեղ դրական հերոսների ողբերգությունը զուգընթաց աստիճանաբար անասելի ծանր պատիժների են ենթարկվում, իսկ վերջում պատժվում են չարերը:

Վիպային այս արկածների ֆոնի վրա է, որ Արմենակ Հայկունին շարադրում է իր գաղափարական համոզմունքները: Վեպի իդեական հիմքն է կազմում ազգային ազատագրական պայքարը:

Հայկունին առաջինն է արևմտահայ գրականության մեջ, որ իր այդ վեպում նկարագրում է գավառի աշխատավոր հայ ժողովրդի կրած տառապանքը, թուրք և քուրդ բեկերի, ավազակների ճնշման տակ, նա իր հերոսներից մեկի՝ Մաթեոյի միջոցով, — որն իբր թե շրջել է Եփրատի ափերը և ծանոթացել հայ գյուղացիների ապրուստին և կենցաղին, — նկարագրում է հայ գյուղացու ծանր վիճակը: Գյուղացին քրտնաջան աշխատանքով որոշ բարիքներ է ձեռք բերում, որոնք խլվում են ավազակների կողմից, այնպիսի մարդկանց, որոնք ապրում են ուրիշի աշխատանքի արդյունքով:

Հայկունու սահմանափակ աշխարհայացքը հնարավորություն չի տվել նրան՝ օտարազգի կեղեքիչների կողքին տեսնելու հայ կալվածատերերին ու շահագործողներին, որոնք նույնքան դաժանությունամբ հափշտակում էին ու թա-

լանում հայ գյուղացու հարստությունը: Այդ բանը Հայկունուց 15 տարի հետո իր «Շահենն ի Սիրի» վեպում ցույց տվեց Սեդրակ Տեր Սարգսենցը:

Հայկունին իր վեպում սուր քննադատության է ենթարկում հայ հոգևորականներին, որոնք փոխանակ ժողովրդին ինքնապաշտպանություն քարոզելու, քարոզում են հլուծյուն և հնազանդություն: Նույն Մաթեոսի միջոցով ներկայացված է մի քահանա, որը վտանգի պահին փոխանակ քարոզելու նրանց պաշտպանել իրենց ինչքն ու պատիվը, ասում է գյուղացիներին.

«Բայց որովհետև քրիստոնյա եմք, հարկ է ուրեմն մեզ անոնց հետ չի պատերազմիլ, ուզածնին տալ և կյանքերնիս ու պատիվնիս ազատել»:

Հայկունին ամբողջ հասակով ծառանում է քրիստոնեական այդ սկզբունքի դեմ, որը կյանքի պայքարում միանգամայն աղետաբեր էր փոքր ժողովուրդների համար, որից հայ ժողովուրդը դարերի ընթացքում շատ էր տուժել:

Հայկունին ավետարանի «մի կալ շտրին» պատգամի փոխարեն առաջ է քաշում «Յշնամու հարվածին հարվածով պատասխանելու պահանջը»:

Նրա հերոսներից մեկը քահանայի վերոհիշյալ քարոզին պատասխանում է. «Մինչ ե՞րբ պիտի մենք մեր աշխատության պտուղը, մեր իրավունքը անոնց տանք, մինչև ե՞րբ պիտի հարվածեն մեզ և մենք լուենք. մինչև ե՞րբ այս վատ և անարգելի կացության մեջ պիտի թափառինք, ինչու զենք չառնենք անոնց դեմ, ինչու չպատժենք զանոնց... ես իմ կողմանես պիտի կռվիմ անոնց հետ... ով որ կուզե թող ընկերանա ինձի»¹:

Հայկունու վեպը լույս է տեսել այն օրերին, երբ իտալական ժողովուրդը օրհասական պայքար էր մղում օտար բռնապետության լուծը թոթափելու համար և բարձրացրել էր ազատության դրոշմ, ժողովուրդների ազատագրության պատմության մեջ գրել էր փայլուն էջեր: Իտալական ժողովրդի այդ պայքարով ոգևորվել են ժամանակի բոլոր առաջավոր մտածողները հայ իրականության մեջ ամենից առաջ, Մ. Նալբանդյանը, Ս. Շահազիզը, Մ. Պեշիկթաշլյանը և ուրիշները: Նույն այդ ազատագրական պայքարի որոշակի արձագանքն է, որ մենք տեսնում ենք Հայկունու վեպի մեջ: Նա իր իտալացի հերոսներից Մաթեոսի միջոցով ջերմ տողեր է նվիրել իտալական ազատասեր ժողովրդին:

«Ինչո՞ւ,— գրում է Հայկունին,— օտար բազուկներ իշխեն անուր վրա: Միթե իրավունք է, որ օտար մը իշխե Իտալիային»:

Ավելի ուշագրավ է Հայկունու հետևյալ դատողությունը.

«Միթե, ինչպես ամեն անհատ, անանկ ալ ամեն ազգ իրավունք չունի երկրիս վրա պաշտպանելու իր սեփական տեղը և հոն երջանկաբար ապրելու բոլորովին անկախ որևէ ուրիշ հարստահարող և բռնաբարող բազուկե»²:

Իտալական ազգային ազատագրության այս ջատագովումով Հայկունին բարձրացնում էր Հայաստանի ազատագրության հարցը: Իտալական ժողովրդի ազատատենչ ոգին նա հակադրում էր թուլամորթ ու ստրկամիտ հայ հոգևորականության քարոզներին: Հայկունու համար աշխարհում չկա ավելի մեծ առաքինություն, քան հայրենիքի պաշտպանությունը, հայրենիքի համար պայքարելն ու զոհաբերվելը:

Վեպում մի առիթով, երբ հեղինակը խոսում է հայ գյուղացու կրթության լուսավորության և ապագայի մասին, ասում է, թե եթե հայ ժողովուրդը լու-

¹ «Էլիդա», 1861, էջ 64:

² Նույն տեղում:

սավորվի, երկրագործությունը զարգանա և կարողանա պետական հարկերն էլ ժամանակին ու կանոնավոր տալ, ապա նրա աշխատանքի արդյունքը կապաշտպանի մեր «ինքնիշխան թագավորը, հզոր և բարեգութ օսմանյան կայսրությունը»։ Անշուշտ այս տողերը գրված են բացառապես քաղաքական նկատառումներով, դրանք ամենևին Հայկունու դավանանքը չեն և չէին կարող լինել 60-ական թվականների պրոգրեսիվ մտածողներից որևէ մեկի համոզմունքները։

Ռուսաստանի վերաբերյալ իր կարծիքները հայտնելիս Հայկունին ընկել է հակասությունների մեջ, նա մերթ կարեկցություն մը է խոսում ճորտերի մասին, որոնց տառապանքը տևական է նրանով, որ «Ռուսիո մեջ աստված շատ բարձր է, իսկ կայսրը ավելի հեռու», բայց ահա մի այլ տեղում Հայկունին նույն այդ կայսրին ներկայացնում է իր հպատակների, այդ թվում և ճորտ հպատակների ճակատագրով մտահոգված մի անձնավորություն։ Նա մերթ ճիշտ կերպով նկատում է, որ ռուս կալվածատերերը փարթամորեն ապրում են ծծելով իրենց ճորտերի արյունը, «ծամելով անոնց ոսկորները», մերթ փորձում է ցույց տալ, որ ճորտը սիրում է իր տիրոջը, անձնագոհ կերպով իր կյանքը կապում նրա հետ։

Հայկունին դրական կարծիք չունի նաև արևմտաեվրոպական երկրների գյուղացիության վիճակի մասին։

Նա Ռուսաստանի ճորտերի վիճակը ավելի բարվոք է համարում, քան Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի աշխատավոր գյուղացիության վիճակը։

«Եվրոպիո ո՞ր երկրին մեջ երկրագործին բեռը թեթև է. որքան ծանր է անգլիո երկրագործներունը, մանավանդ Գաղիայինը, Գերմանիայինը և ամենեն ավելի Ավստրիայինը. այս վերջինին երկրագործները իրենց աշխատության արգասիքեն գրեթե երեք շորրորդ մասը կառավարության կուտան»։

«Էլիզա» վեպում լայն տեղ է տրված այն ուժեղ պայքարին, որ հայ իրականությունում մղվում էր կրոնական դավանանքների դեմ։

Վեպում այն միտքն է զարգացվում, թե հենց աստծուն անհաճո է ատելությունը ալլակրոնների նկատմամբ։

«Խիստ ցավալի իրողություն մըն է,— գրում է նա,— նկատել, որ ընդհանուր մարդկային սեռը երկրիս վրայեն մարդասիրությունը ջնջելու համար կրոնքներ կստեղծե և ամեն մեկ կրոնական դրոշակին ներքո գտնվող՝ կստիպվի մյուսները ատելու՝ իբր աստված աստուծմե և որդիք դատապարտության...։ Եթե կրոնքները երկինքեն լինեին՝ իրենց արգասիքը մարդասիրությունը ջնջել պիտի չլիներ»։

«Էլիզա» վեպում արծարծված մի շարք հարցեր Հայկունին հնարավորություն ունեցավ ավելի որոշակիորեն առաջ քաշել իր մի շարք հրապարակախոսական բրոշյուրներում։

Հրապարակախոսական ասպարեզ մտնելով ճիշտ այն օրերին, երբ ռևոլյուցիոն դեմոկրատ Մլիքայել Նալբանդյանն իր «Երկու տող» և այլ գործերում բռնկվալով մղում պոլսահայ ղեակցիոն տարրերի դեմ, Հայկունին կանգնում է ժամանակի առաջավոր մտավորականների շարքերում և դիմագրավում ղեակցիային։ Նա՝ հանձին Չամուռճյանի տեսնում էր ամենամուլի հետադիմական փաղափարներ պաշտպանող մի մարդու։ Պատահական չէ, որ իրեն համարում էր Չամուռճյանի ոխերիմ հակառակորդը։

Հայկունին անձամբ ճանաչել է Նալբանդյանին, նրան հանդիպել է թե՛ Իզմիրում և թե՛ Կ. Պոլսում, կրել է նրա ազդեցությունը, իսկ ռևոլյուցիոն մեծ

դեմոկրատի ձեռքակալությունից հետո արևմտահայ իրականության մեջ Սվաճյանից հետո գուցե առաջինն էր, որ այնքան շատ հետաքրքրվել է նախնադարյանի ձեռքակալման հանգամանքներով, նրա վիճակով։ Նախնադարյանի մասին ստացված վատ լուրերը ցնցել են նրան, ուրախ լուրերը հրճվանք պատճառել¹։

Հայկունու հրապարակախոսության մեջ շոշափված հարցերը նույն այն հարցերն են, որ այդ տասնամյակում հուզում էին հայ առաջավոր գրողներին ու հրապարակախոսներին, այսինքն՝ ազգալին ազատագրության գաղափարի պաշտպանություն, եվրոպական պետությունների գաղութային քաղաքականության մերկացումը, հայ ժողովրդի լուսավորություն, հայ հոգևորականության քննադատությունը և այլն։

Ազգային ազատագրական պայքարը Հայկունու մոտ չի ստացել իր վերջնական ձևակերպումը։ Այն հայացքները, որ նա պաշտպանել է իր «Էլիզա» վեպում, այսինքն անկախ Հայաստանի գաղափարը՝ անկախ Բալկանյան մասն, շարունակել է մնալ նրա մոտ 1861 թվականից հետո էլ, մինչև իր մահը, առանց կոնկրետացնելու սահմանադրական միապետության ձևը բերման ուղին, որ տարբեր դասակարգեր տարբեր կերպ էին ըմբռնում։

Մի հանգամանք սակայն բնորոշ է։ Մինչդեռ «Էլիզա» վեպում նա դրական է արտահայտվում անգլիացիների մասին, նրանց Թյուրքիա ներթափանցմանն էլ կարծեք տալով մարդասիրական բնույթ, իր հրապարակախոսական մի քանի աշխատություններում խիստ քննադատության է ենթարկում միսիոնարական շարժումը, այդ շարժման տակ տեսնելով օտարերկրյա գաղութարարների քաղաքական նպատակները։

Բողոքականության դեմ Հայկունու պայքարը սկսվում է դեռևս նրա դրական հրապարակ մտնելու առաջին տարիներից, 1857—58 թվականներից և խորանում է 1860—63 թվականներին։ Առաջին շրջանում նրա բանավեճը թույլ է, դեռևս նկատելի է բողոքականների դպրոցի որոշ ազդեցությունը նրա վրա։ Միաժամանակ այդ շրջանում նա բողոքականությանը հակադրում է լուսավորչական եկեղեցին և առավելությունը տալիս է վերջինիս։ Հետագայում, սակայն, երբ Հայկունին արդեն ժխտում է ոչ միայն հայ եկեղեցու կրոնական դոգմաները, այլև ընդհուպ մոտենում է եկեղեցու ամբողջական բացասմանը, բողոքականության դեմ նրա պայքարն էլ ստանում է ավելի սուր և նպատակասլաց բնույթ, հատկապես բողոքականների պաշտոնական օրգան համարվող «Ավետաբեր» պարբերականի դեմ, որը նա կոչում է «Աղետաբեր»։

«Ավետաբեր»-ի դեմ գրած հոդվածներից մեկում Հայկունին սպառնում էր հրատարակել մի քանի բողոքող միսիոնարության դեմ, տալիս է նույնիսկ նրանց անունները։

Դժբախտաբար նա հնարավորություն չի ունեցել այդ բոլորը հրատարակելու։ Մեղ որքան հայտնի է նա բողոքականության դեմ հրատարակել է երկու գրքուկ՝ Դրանցից առաջինը կոչվում է «Պղատոնի Վոսփոր» (1860), որտեղ նա, հարվածելով բողոքական դավանանքը, պաշտպանում է լուսավորչական եկեղեցին, երկրորդը կոչվում է «Թուրքանդա տիկին և յուր գաղափարքը ամերիկացի երիցական քարոզչաց վրայոք»։ Այդ գիրքը Երևանում չկա։ Նրա բովանդակության հիմնական միտքը շարադրված է հենց շապկի վրա տպված հետևյալ

¹ Արմենակ Հայկունու և Մ. Նախնադարյանի գաղափարական կապերի մասին տե՛ս մեր «Մ. Նախնադարյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր» հոդվածում, «Տեղեկագիր», 1949, № 9։

նախադասության մեջ. «Ամերիկացի երիցական քարոզչաց Հայաստանյայց լուսավորչական եկեղեցվո դեմ բռնած ընթացքը հակառակ է սուրբ դրոց, աստծո կամացը և ճշմարիտ իմաստասիրության»:

Այս տողերից երևում է, որ Հայկունին բողոքականության դեմ այդ գրքում պայքարում է՝ կրոնական նույն դիրքերից:

1861 թվականից Հայկունին իր հրապարակախոսական հոգվածներով և գիտական մասսայական բրոշյուրների միջոցով փորձում է ցույց տալ, որ գիտությունը և կրոնը երբեք չեն կարող հաշտվել միմյանց հետ. մինչդեռ կրոնը ձգտում է սքողել, խեղաթյուրել ճշմարտությունները, արգելել բնության ճանաչմանը, այն ժողովրդին ծառայեցնելու գաղափարին, գիտությունը գերազանցապես կոչված է սպասարկելու մարդկային երջանկությանը, կոչված է հեղաշրջելու մարդկային կենցաղը, նրան ազատելու շատ աղետներից, որոնք արդյունք են նախապաշարումների: Եվ որ մարդու մարմինը կրոնի կողմից ճանաչվելով աստծո ստեղծագործությունը, ստորադասվել է հոգու գերիշխանությանը և դատապարտվել քայքայման, ոչնչացման՝ անդրաշխարհի ապառնի խոստումների փոխարեն, այնինչ, մարդ արարածը բնության գերագույն հրաշալիքներից մեկն է և կարիք ունի ամենախոշոր ուշադրության, խնամքի, հսկողության: Եվ միայն առողջ, կայտառ մարմինը կարող է տալ մարդու հոգեկան անդորրություն, մտավոր գործունեության լայն հնարավորություն:

Իր այս կարգի գաղափարները Հայկունին ձևակերպել է հետևյալ տողերով՝ «մարդկային որևիցե ընկերություն, որ կուզե լուսավորվիլ և այս աշխարհին մեջ երջանիկ լինիլ, պարտի բնության ամեն օրենքներու և մարդկային կազմության հիշյալ օրենքներուն հետ ունեցած հարաբերությանց տեսլակ և ընկերական պարտավորությանց լավ վերահասու լինիլ»:

Այս նպատակով է, որ Հայկունին հակառակ եկեղեցու և պահպանողական բանակի ամեն վայնասուններին, միմյանց հետևից լույս է ընծայում մի քանի բրոշյուրներ՝ «Գարնան ծաղիկներ», «Գերեզմանք երիտասարդաց», «Գաղտնիք բնության» և այլն, որոնք բոլորն էլ խոսում են առողջապահական հարցերի մասին, երիտասարդության մեջ տարածված վնասակար ախտերի մասին:

Հայկունին այն համոզմունքն ուներ, որ եթե կազմախոսական, սերնդագործական հարցերը ամոթ համարվելով չարգելվեն, և նրանց մասին գրվի ավելի ազատ, հազարավոր երիտասարդներ ի վիճակի կլինեն հեռու մնալ այն վատագույն ախտերից, որոնք ժամանակից շուտ այդ «գարնան ծաղիկներին» առաջնորդում են գերեզման:

Նա իր այս գրքույկներում, որոնք արժանացել են մի քանի տպագրության, զետեղում էր նաև անատոմիական նկարներ, ավելի մեծ գալթակղություն պատճառելով կեղծ բարեպաշտներին և հոգևորականներին:

Նա հրապարակով հայտարարում էր «Մեր արդի սովորական քաղաքակրթությունը ամենեկին հարաբերություն չունի ճշմարիտ պարկեշտության հետ, վասնզի նա յուր անթափանցելի վարագույրովը կծածկե մեր ներքին աղետները, և հետևարար նոցա զարհուրելի կերպարանքը մեր տեսութենեն հեռի պահելով՝ կզրկե զմեզ հսկողության փրկարար պարիսպեն»:

1 «Գերեզմանք երիտասարդաց», էջ 71:

* * *

Ժողովրդի կուլտուրական վերելքի, մտավոր զարգացման համար կենսական նշանակություն ունեցող ֆակտոր համարելով թատրոնը, Հայկունին զգալի աշխատանք է կատարել արևմտահայ թատրոնի զարգացման ուղղությամբ:

Ժամանակի ռեակցիոն գործիչները նիզակներով էին դիմավորում թատրոնի սկզբնավորումը Պոլսում, փորձում էին իրենց կեղծ բարեխոսություններով թատրոնը ներկայացնել որպես անբարոյականության մի վայր, իսկ դերասաններին՝ անբարոյական մարդիկ:

Հայ թատերագիտական գրականության առաջին նմուշը կարելի է համարել Հայկունու մի հոդվածը՝ տպագրված «Մուսայթ Մասյաց» պարբերականի մի քանի համարներում: Այդ հոդվածի մեջ հեղինակը առաջ է քաշում և որոշում թատրոնի ֆունկցիան, ժողովրդի լուսավորության ու դաստիարակության գործում: Ըստ Հայկունու՝ թատրոնը մարդկանց թերությունները ուղղող, ռուբ բարքերը ցուցադրող, դրանցից խուսափելու կոչ անող և լավի, օգտակարի պրոպագանդան ներգործոն միջոցներով կատարող մի դպրոց է:

«Թատրոն մը ուրիշ բան չէ, գրում էր նա, բայց միայն ժողովրդյան վարքը և բարքը ուղղելու նպատակով կանգնած դպրոց մը»:

Նրա կարծիքով ոչ մի այլ միջոց այնքան ազդու չէ, այնքան ներգործուն չէ, որքան բեմը: Այն բոլոր գաղափարները, լինեն դրանք հայրենասիրական, կրթական, լուսավորական թե բարոյական, որոնք հնչում են բեմից, անհամեմատ ավելի շուտ են ընկալվում հասարակության կողմից, քան եկեղեցու բեմերից արտասանվող քարոզները կամ մամուլի էջերից բարձրացող հարցերը:

Հայկունին միաժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ռեպերտուարի և ներկայացվող պիեսների լեզվի վրա, նա աշխարհաբար լեզուն լավագույն ձևով սովորեցնող դպրոցը համարում էր թատրոնը, «վասնզի թատրոնին մեջ դերասանին բարձր ձայնով հնչած պարզ և մաքուր խոսվածքը հանդիսատեսներուն մտքին վրա մեծ ազդեցություն ընելով անշուշտ պիտի գրգռե դիրենք նույն կերպով խոսելու»:

Արմենակ Հայկունու լուսավորական, կրթական այս բոլոր գաղափարները անդիպում էին ժամանակի պահպանողական, խավարամիտ խավերի ամենաբուռն դիմադրությանը: Պահպանողական մամուլը, հատկապես հոգևորականությունը և նրա հովանավորությամբ գործող ազգային իշխանությունները, սարսափում էին այն բանից, որ աննկատ չէին անցնում Հայկունու բրոշյուրները: դրանց արժարժած գաղափարները, առաջ քաշած սկզբունքային հարցերը դառնում էին լայն քննարկման նյութ, մտքեր էին հուզում և որ ամենից ուշադրալի էր, մեծանում էր այդ գաղափարների պաշտպանների բանակը: Առաջավոր մամուլը, հատկապես դեմոկրատական «Մեղու»-ն, իր պաշտպանության տակ իր տունում Հայկունուն:

Այս բոլորի մեջ հետադիմական տարրերը տեսնում էին հայ եկեղեցու ազդեցության թուլացումը մասսաների վրա, վերջիններիս գաղափարական ակտիվացումը և կրոնական կապանքներից աստիճանաբար ազատվելու նրանց որոշակի տենդենցը:

Կրոնի ու կրոնական պաշտոնյաների նկատմամբ իր մոտեցումը Հայկունին բնորոշել է հետևյալ կերպ. «Մարդկային բարոյականությունը երբևիցե դադում առած չէ կրոնքեն: ...Կրոնավորաց և բարոյականության մեջ ահագին

անջրպետ մը կա: ...Լոկ կրոնասիրությունը միմիայն հանդերձյալ կյանքին մեջ երջանկություն մը ձեռք բերելու համար գրեթե արված պարտավորություն մի է: Ճշմարիտ կրթությունը միայն կրոնասիրության և անոր վերաբերյալ ուսմանց մեջ չէ: Մարդս աշխարհ եկած չէ հանդերձյալ կենաց համար տանջվելու, այլ այս կյանքս ալ շատ երանություններ ունի, որ վայելելու է»¹:

Ինչպես այս բնութագրությունից երևում է՝ Հայկունին գիտության և լուսավորության խոշորագույն հանդիսացող առաջին նախապայմանը համարում է կրոնը, որը դեմ է ամեն մի նորության և ձգտում է պաշտպանել ստրկության դարավոր դոգմաները: Կրոնն է, որ դեմ է կրթական, գիտական ընկերություններին, թատրոնին, աշխարհիկ բովանդակությամբ գրականությանը և այլն:

Կրոնն է, որ հանդերձյալ կյանքի կեղծ հավաստիացումներով քարոզում է ստրկական համակերպություն տիրապետող կարգերին:

Ըստ այսմ էլ, Հայկունին բազմաթիվ հոգվածներով ու բրոշյուրներով փորձում է հիմնավորել իր տեսակետները կրոնի ու կրոնական պաշտոնյաների նկատմամբ:

Նա ցույց է տալիս, որ բարոյականությունից, պատվից խոսույ յայդ քահանաներն ու մանավանդ ամուրի հոգևորականները անբարոյականություն են համարում առողջապահական խորհուրդները, կուլտուրական դարգացումը, թատրոնը, բայց կատարում են այլանդակ արարքներ, միթե՞ այդպիսի այլանդակություն չէ, երբ «խոստովանության միջոցին քահանան դեռ աբբունքի շահած աղջկան մը կամ պատանիի մը ականջեն վար չլսված ամենապիղծ մտքերը կհիշեցնեն»:

Անշուշտ Հայկունին հնարավորություն չունեի XIX դարի կեսերի պոսական պայմաններում դրանից ավելին գրելու, բաց ի բաց ժխտելու կրոնը: Ինքը այդ գիտակցելով է, որ գրել է, թե ժամանակը չի եկել հոգևորականության կատարյալ մերկացման:

Այսուամենայնիվ նա համարձակվել է գրել, որ «որեւիցե մարդ մեծ իրավամբ կրնա տարակուսել կրոնի ճշմարտության վրա»:

Հայկունու հակառակորդներից մեկը, Ստեփան Փափագյանը մի ուշադրում խոստովանություն ունի, որից երևում էր, որ Հայկունին կրոնի նկատմամբ շատ ավելի ժխտական վերաբերմունք է ունեցել, քան այդ կարողացել է արտահայտել գրավոր խոսքի մեջ:

Երբ 1863 թվականին իր հրատարակած «Ձայն» պարբերականում մի քանի հոգվածներ է գրում կրոնի մասին, հետադիմական մամուլը նիզակներ է ճոճում նրա դեմ: Պահպանողական «Ժամանակ» պարբերականի խմբագիր Ստեփան Փափագյանը առանձին խոսում է Հայկունու հետ, փորձում դարձի բերել «մոլորված» ու «ճանապարհը կորցրած» հրապարակախոսին: Հայկունին ոչ միայն չի ժխտում իր հակակրոնական գաղափարները, այլ «սրտի ցավ մ'ալ նկատեցինք վրան», — գրում է Փափագյանը, — որ կարող չէ համարձակ իր սկզբունքները հրատարակել և մարդկության ազգը փրկել այնպիսի նախապաշարումն մը, որ հավիտենական ցնորքով մը երկրիս մեջ զանազան երանություններ և երջանկություններ վայելելն իրաված է»²:

¹ «Ճերմակ կամ պ. Ս. Փափագյան», 1863, էջ 4:

² «Ժամանակ», Կ. Պոլիս, 1863, № 16:

Պատահական չէ՝ որ Փափագյանը Հայկունուն համարում էր «այն սև հողի-ներեն մեկը», որոնք «անդադար կմարտնչին աստծո եկեղեցվույն դեմ»¹:

1863 թվականին Փափագյանը իր ընթերցողներին հայտնելով թե Հայկունու հակակրոնական արարքների մասին խոսվել է նաև «Կրոնական ժողովում», ասի-սոսում է, որ նա «միտք չունի դեպի հավիտենական լույսը դառնալու», գուցե «Աստուծո անհուն ողորմությունը հասնի ու փրկե մեր այս կորսված եղբայ-րը... որուն վրա ստիպված ենք լալու»:

Հայկունու հակակրոնական համարձակ ելույթները իրարանցում առաջ բե-րեցին Պոլսում: Անհրաժեշտ եղավ, որ գործին միջամտի պատրիարքը, անձամբ գրի մի բրոշյուր Հայկունու, Կարապետ Փանոսյանի, Սվաճյանի և ուրիշների դեմ՝ «Քրիստոսի սուրբ եկեղեցին ու անոր հակառակորդները» վերնագրով: Բա-ցի այդ՝ պատրիարքը հատուկ բանադրանք է գրում «Ձայն» թերթի խմբագիր-ների, հատկապես Հայկունու դեմ, նրան համարում է հերետիկոս: Այդ բանա-դրանքը ընթերցվում է Պոլսի բոլոր հայ եկեղեցիներում:

Քաղաքական ժողովը պարտադրում է Հայկունուն իր թերթում ներողություն խնդրել կատարված հանդգնության համար, վերականգնել եկեղեցու և հոգևորա-կանության հեղինակությունը, ճշտել իր դիրքերը, ցույց տալ, որ ինքը չի մեր-ժում աստծո գաղափարը:

Հայկունին հոգևոր իշխանությունների, հատկապես պատրիարքարանի բըռ-նադատության տակ «Ձայն»-ում գրում է հետևյալ տողերը.

«Քաղաքական ժողովո պահանջմուն համար, ստորագրություն տվինք հիշ-յալ ժողովին. ըստ պահանջման ազգային քաղաքական ժողովո փութամ հայտ-նել թե ես իմ թերթիս 30 թվով «Կնոջ ազատագրությունը» վերնագրով հոգվածիս վերա բացատրություն մը պիտի հրատարակեմ, հայտնելու համար թե նույն հոգվածով իմ միտքս բնավ քրիստոնեության կամ պսակի խորհուրդո դեմ խո-սել չէր և թե շատ կցավիմ, որ հիշյալ հոգվածը իմ նպատակես տարբեր կեր-պով հասկցվեր է՝ խնդիրը լավ և անթերի բացատրած չլինելու պատճառով, ար-դարև կզղջամ այս պակասությանս վրա: Ռեճանի թարգմանությունը ստիպված եմ այլևս չհրատարակել»:

«Ա. Հայկունի»

Որ Հայկունու այս մեղայականը գրված է հարկադրանքի տակ և բոլորո-վին էլ չի արտահայտում նրա համոզմունքները, ցույց է տալիս այն ծաղրա-նկարը, որ լույս է տեսել «Ձայն»-ի հաջորդ համարներից մեկում: Այդ ծաղրա-նկարը պատկերում է Հայկունուն երկու ոտքերը երկարաճիտ կոշիկի (որ թուր քերեն կոչվում է ճիզմե, իսկ Հայկունու ազգանունն է Ծիզմեճյան) մեջ, հետևյալ մակագրությամբ. «Արմենակ Հայկունի Ծիզմեճյանի երկու ոտքը մեկ ճիզմեի մեջ է, սակայն չպիտի դադարի ձայն հանելու, մինչև որ կոկորդը պատռվի»: Ուղում է ասել մինչև մահ հավատարիմ է մնալու իր սկզբունքներին, իր գաղա-փարներին:

Հակառակ իր ցանկությանը, Հայկունին չկարողացավ շարունակել պայքա-րը կրոնի ու նրա պաշտոնյաների դեմ, նրա շուրջ ստեղծված ինտրիգները, տնտեսական ծանր պայմանները խեղդում են նրա ձայնը, իզուր է նա փորձում մահից դեռ մի տարի առաջ հասարակությանը լսելի դարձնել իր «Ձայնը»: Այն խափանվում է վերջնականապես: Հայկունին միռնում է 1866 թվականին:

¹ «Ժամանակ», Կ. Պոլիս, 1863, № 16: